ՀԱԿՈԲ ՀԱՏԻԿՅԱՆ. Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878-1923 թթ., *Երևան, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոն, 2016, 275 էջ:*

Հատուկ ծառայությունների պատմությունը, դրանց կառուցվածքը, գործելակերպը, իրականացրած օպերացիաները մշտապես հետաքրքրել են հետազոտողներին, նույնիսկ առանձնացել է ուսումնասիրողների հատուկ խումբ, որը մասնագիտացել է տարբեր երկրների հետախուզության և հակահետախուզության պատմությունների լուսաբանմամբ:

Ինքնին հասկանալի է, որ հատուկ ծառայություններն աշխատում են որքան հնարավոր է չգովազդել իրենց գործունեությունը, ուստի դրանց արխիվները հիմնականում մնում են անհասանելի հետազոտողների համար: Ժամանակ առ ժամանակ, սակայն, հրապարակվում են աշխատություններ, որոնք լուսաբանում են հատուկ ծառայությունների տարբեր ժամանակներում ծավալած աշխատանքները, հակառակորդի դեմ պայքարի մեթոդները և այլն:

Օսմանյան բռնապետության դեմ հայ ազգային-ազատագրական ուժերի պայքարին նվիրված հուշերում, աշխատություններում, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում, գիտական հոդվածներում հիշատակվում ու կոնկրետ օրինակներ են բերվում թուրքական հատուկ ծառայությունների ծավալած գործունեության մասին, որոնք նպատակ են ունեցել վիժեցնել հայերի ազատագրական նկրտումները: Այս հիմնահարցի լուսաբանմանն է նվիրված պատմական գիտությունների թեկնածու Հակոբ Հատիկյանի մենագրությունը: Հետազոտության ժամանակաշրջանն ընդգրկում է Հայկական հարցի առաջացումից մինչև Թուրքիայի Հանրապետության ստեղծումը:

Մենագրությունում Հ. Հատիկյանն ընդգծում է այն կարևոր միտքը, որ օսմանյան գաղտնի ծառայությունների՝ «Յըլդըզ»-ի (“Yildiz Istihbarat Teşkilat- 1 Mahsusa”) և «Հատուկ կազմակերպությունը» (“Teşkilat-1 Mahsusa”) ժառանգորդը մեր օրերի Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպությունն է (Milli Istihbarat Teşkilatl):

Հեղինակն իր առջև դրել է հետևյալ հիմնախնդիրների լուսաբանումը.

1. ներկայացնել հայկական տարբեր կազմակերպությունների (գաղտնի ընկերությունների, խմբակների և ազգային կուսակցությունների) պայքարի ձևերն ու մեթոդները Օսմանյան կայսրության հետախուզական մարմինների և գաղտնի ոստիկանության դեմ: Վեր հանել այդ կազմակերպությունների գրանցած հաջողություններն ու անհաջողությունները, վերլուծել դրանց պատճառները և հետևանքները,

2. Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կառուցվածքը, աշխատանքի ձևերն ու մեթոդները,

3. հատուկ ծառայությունների գործակալական ցանցի կառուցվածքը և գործունեության յուրահատկությունները,

4. Աբդուլ Համիդ II-ի օրոք «Յըլդըզ» -ի գործունեությունը,

5. «Հատուկ կազմակերպության» կազմավորումը, կառուցվածքը, գործակալական ցանցը, գործուն մասնակցությունը հայության ցեղասպանությանը և այլն,

6. 1920-ական թվականների հայ-քրդական համագործակցությունը:

Մենագրության արժեքավոր և կարևոր հատկանիշներից մեկն այն է, որ հեղինակն օգտագործել է Ռուսաստանի Դաշնության և Թուրքիայի Հանրապետության արխիվային նյութերը, որոնք վերջերս են գաղտնազերծվել:

Հայաստանի ազգային արխիվում Հ. Հատիկյանը գտել է վավերագրեր Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատում հայ հետախույզների ծավալած գործունեության մասին: Այդ մասին համապատասխան վկայություններ կան Հայկական I Հատուկ հետևակային բրիգադի հրամանատար, գեներալ Նիկոլայ Մորելի (1869–1920 թթ.) անտիպ հուշերում: Վերջինս մոտիկից ծանոթ էր հետախուզական գործունեությանը, քանի որ պատերազմի նախօրյակին եղել է Ճապոնիայում ռուսական ռազմական կցորդի տեղակալը: Գեներալն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Մեբաստացի Մուրադի (Մուրադ Խրիմյան), հայկական բանակի սպաներ Չախալյանի, Տեր-Վարդանյանի ու այլոց ստեղծած գործակալական ցանցի և հավաքած տեղեկությունների մասին: Հեղինակը հատկապես կարևորում է հետախուզական բաժանմունքի աշխատակից Տիգրան Դևոյանցի գործունեությունը:

Հ. Հատիկյանը, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության հետախուզական ստորաբաժանման գործունեությունը, գալիս է այն եզ-

րակացության, որ հետախույզները, 1920 թ. թուրքական հարձակման նախօրյակին, բավական արժեքավոր տեղեկություններ են հաղորդել կառավարությանը և «ինչ-ինչ պատճառներով դրանք (տեղեկությունները - Ռ. Ս.) կամ ուշացումով էին տեղ հասնում, կամ էլ ղեկավարության կողմից համապատասխան վերաբերմունքի չէին արժանանում» (էջ 49):

Հեղինակը դրվատանքով է հիշատակում ՀՅԴ-ի կողմից, մասնավորապես, նրա գործիչներից՝ Մարի (Միքայել Տեր-Մարտիրոսյան) Կիլիկիա անցնելու գործողությունը: Նրա գնահատմամբ Մարը փայլուն կերպով իրականացնում է իր քողարկումը, որպեսզի կարողանա օսմանյան ոստիկանության համար աննկատ ծավալի ազատագրական գործունեությունը, սակայն մատնության հետևանքով ձերբակալվում է ոստիկանության կողմից:

Հ. Հատիկյանը նշում է, որ օսմանյան հատուկ ծառայությունները՝ հետախուզությունն և հակահետախուզությունը, իրենց կայացման ընթացքում անցել են երկու փուլ, որն ընդգրկում է XIX դարի սկզբներն ու կեսերը: Այդ խնդրում սուլթանին օժանդակել են ֆրանսիացիներն ու գերմանացիները:

Ինչ վերաբերվում է Օսմանյան կայսրությունում հատուկ ծառայությունների սկզբնավորմանը, ապա դրանք առաջացել են դեռևս XIV դարում: Հայտնի է, որ թուրքերն ու եվրոպական մի շարք տերություններ ակտիվ մասնակցություն են ունեցել 1773–1775 թթ. Ռուսաստանում Եմելյան Պուգաչովի ապստամբությանը: Դրա վկայություններն ենք գտնում Ֆրանսուա Վոլտերի և Եկատերինա II-ի նամակագրություններում: Բազմաթիվ պատերազմները, որոնք մղվել էին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև, վերջինիս հետախուզության համար գործողությունների գլխավոր թատերաբեմ էին դարձրել Ռուսական կայսրությունը, հատկապես սահմանամերձ շրջանները և Թուրքեստանյան գեներալ-նահանգապետությունը՝ Միջին Ասիան:

Օսմանյան հատուկ ծառայությունը մինչև Աբդուլ Համիդ II-ը հատուկ անվանում չուներ. միայն նրա գահակալության ժամանակ հայտնի դարձավ «Յըլդըզ» անունով:

«Յըլդըզ» հետախուզական կազմակերպության մասին առաջին գրավոր աղբյուրը՝ 1891 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի հանձնարարությամբ գրված գրքույկն է, որն ամբողջությամբ ոչնչացվել էր Էնվեր փաշայի հրամանով: Բարեբախտաբար, պահպանվել է մեկ օրինակ, որը պահվում է Ֆրանսիայի ազգային գրադարանի անձեռնմխելի ֆոնդում: Գրքույկի բովանդակությունից հետևում է, որ օսմանյան հետախուզա-

կան ծառայությունը՝ «Յըլդըզ»-ը, հիմնվել է բրիտանացիների կողմից: Հավանաբար, այս և այլ պատճառներով է բացատրվում, որ Մեծ Բրիտանիան թշնամաբար էր տրամադրված օսմանահպատակ ազգային փոքրամասնությունների, հատկապես հայերի ազգային-ազատագրական շարժումներին և մշտապես օժանդակել է սուլթանական կառավարությանը:

«Յըլդըզ»-ն ուներ գործակալական լայն ցանց: Գործակալներն ամենուրեք փնտրում էին հայ ազատագրական գործիչների կամ էլ, ինչպես այն ժամանակ, նրանց անվանում էին՝ հեղափոխականների: Այսպես, 1891 թ. մարտի 22-ի Կարինի (Էրզրում) ռուսական հյուպատոսարանի աշխատակցի զեկուցագրից տեղեկանում ենք, որ մատնության հետևանքով Մուշում ձերբակալվել է 70 հայ, որոնք ցանկանում էին ընդունել ռուսական հպատակությունը, իսկ «Մատնիչը կանչվել է Յըլդըզ, որտեղ նրան ինչ-որ պաշտոն են տվել»:

Այնուամենայնիվ, պահպանված որոշ փաստաթղթերի պատառիկներ և ժամանակակիցների հուշերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմել հետախուզական այդ կառույցի մասին: «Յըլդըզ»-ում գործել է գաղտնի ծառայությունների երեք ստորաբաժանում: Դրանցից գլխավորը Ֆեհմի փաշայի գլխավորածն էր, որին ենթարկվում էին մյուս երկուսը: Այս փաշան ուներ գրեթե անսահմանափակ լիազորություններ. կարող էր հրամայել խուզարկել ցանկացած անձի բնակարանը՝ անկախ պաշտոնից և սոցիալական դիրքից:

Բեռլինի վեհաժողովը լուրջ ազդակ էր հայ ազատագրական շարժման համար: Հիմնվեցին ընդհատակյա կազմակերպություններ և կուսակցություններ, որոնք սկզբնապես գործում էին ոչ պրոֆեսիոնալ. մի շարք դեպքերում նրանց շարքերն էին թափանցում սուլթանական գաղտնի ոստիկանության գործակալներ: Սակայն աստիճանաբար հայ գործիչները ոչ միայն անհրաժեշտ փորձ էին ձեռք բերում, հայտնաբերում էին մատնիչներին ու պատժում, այլև իրենց մարդկանց էին ներդնում օսմանյան ոստիկանությունում: Դրա վկայությունն ենք գտնում նաև օսմանյան ՆԳ նախարար Նազըմ բեյի հուշերում: Բացի այդ, հայ գործիչները Արևելյան Հայաստանից Երկիր՝ Արևմտյան Հայաստան էին մտնում՝ ունենալով համապատասխան առասպելապատում (լեգենդ), որն էլ հնարավորություն էր տալիս նրանց քողարկել իրենց իրական նպատակները:

Հայ ազատագրական ուժերն իրենց հերթին օգտագործում էին Օսմանյան կայսրության թշնամի պետությունների հնարավորությունն-

ը: Հայտնի է, որ Բեռլինի վեհաժողովից հետո Բուլղարիան համարվում էր կայսրության վասալ պետություն, ուստի հովանավորում էր հակաթուրքական ուժերին: Բուլղարացիները հայ գործիչներին ապահովում էին կեղծ անձնագրերով, թույլ էին տալիս իրենց տարածքով տեղափոխել զենք ու զինամթերք. նրանց բեռները չէին ստուգում: Ավելին, բուլղարական կառավարությունը թուքերից գաղտնի թույլ էր տալիս հայերին Դուբնիցայի, ապա Ռոդոմետի շրջանում 1906 թ. նոյեմբերին կազմակերպել սպայական դպրոց: Թուրքական հետախուզությունը, որը Բուլղարիայում իր հավատակիցներից ստեղծել էր գործակալական լայն ցանց, շուտով տեղեկանում է դպրոցի մասին և պահանջում է փակել այն: Համանման պահանջով է դիմում նաև Սոֆիայում ռուսական դեսպանորդը: Հայտնի է, որ 1900-ական թվականներին ռուսական կառավարությունը վարում էր ընդգծված հակահայ քաղաքականություն: Դրանով իսկ պայմանավորված էր 1903 թ. հայերի ըմբոստությունները, ռուսական իշխանությունների կողմից հրահրված հայ-թաթարական ընդհարումներն ու Ռուսական առաջին հեղափոխությունը: Ի վերջո, բուլղարացիները հարկադրված են լինում 1907 թ. լուծարել դպրոցը:

Հ. Հատիկյանը, վերլուծելով սպայական դպրոցի փակման պատճառները, գալիս է հետևյալ եզրակացությունների. 1. ներկուսակցական հակասություններով, 2. գործիչների ոչ բավարար քողարկմամբ, 3. օսմանյան հետախուզության և ոստիկանության վերը նշված հանգամանքների ակտիվ օգտագործմամբ:

Հայ ազատագրական շարժման գործիչների վերաբերյալ օսմանյան հետախուզությունը և գաղտնի ոստիկանությունը տեղեկություններ էին ստանում արտասահմանում գտնվող իրենց դիվանագիտական ներկայացուցիչների կողմից:

Հայտնի է, որ Առաջին համաշխարհային պատերազմը լոկ առիթ է դառնում Օսմանյան կայսրության երիտթուրքական կառավարության համար՝ իրագործելու վաղօրոք մշակված ծրագիրը՝ հայերի ցեղասպանությունը: Այս ոճրագործությունում իր զգալի դերն է խաղացել «Հատուկ կազմակերպությունը», որի առաջին զոհերն են դառնում Կարսի և, հատկապես, Բաթումի մարզերում բնակվող ռուսահպատակ հայերը (1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր): Դա են վկայում ռուսական իշխանությունների անցկացրած հետաքննությունները:

Օսմանյան հետախուզությունը, որ դեռևս պատերազմի ժամանակ կապեր էր հաստատել բոլշևիկների հետ, 1918–1922 թթ. նրանցից ստանում էր հետախուզական բնույթի տեղեկություններ և, նույնիսկ, զենք էր

տրամադրում ՀՀ-ի դեմ գործող մահմեդական ավազակախմբերին (տե՛ս էջ 228): Միաժամանակ, թուրքերը գործում էին բոլշևիկների դեմ՝ աշխատելով թույլ չտալ նրանց վերջնականապես հաստատվել Ադրբեջանում:

Համաշխարհային պատերազմի ավարտից հետո ՀՅԴ-ը կարողացավ թուրքական հետախուզությունից գաղտնի կազմակերպել «Նեմեսիս» գործողությունը: Այն հնարավորություն չտվեց զգուշացնել արտասահմանում թաքնված երիտթուրք պետական ու ռազմական գործիչներին, որոնցից շատերը ստացան իրենց արժանի պատիժը:

Մենագրությունում Հ. Հատիկյանը լուսաբանում է ՀՀ-ի հետախուզության և հակահետախուզության ծավալած գործունեությունը: Նաև անդրադարձել է հայ-քրդական համագործակցությանը ու նրանց դեմ քեմալականների պայքարին:

Հեղինակի կատարած գիտահետազոտական աշխատանքին իրենց գնահատականներն են տվել ՀՀ ազգային անվտանգության մարմինների վետերանների խորհրդի նախագահ, գնդապետ Ն. Մինասյանը և պ. գ. դ., պրոֆեսոր Վ. Վիրաբյանը:

Ներկայացնենք նաև մեր մի շարք նկատառումներն ու դիտարկումները.

1. աշխատությունը պետք է ունենար անձնանունների և տեղանունների ցանկ, 2. պետք է նշվեր ռուսական հեղափոխության «վաճառական», գերմանական և թուրքական լրտես Ալեքսանդր Պարվուսի՝ հայ ազատագրական շարժման դեմ մղված պայքարի մասին, 3. պատերազմի տարիներին գերմանական և թուրքական հետախուզությունների համագործակցության մասին, 4. քեմալական և բոլշևիկյան հետախուզությունների սերտ հարաբերությունները, որոնք շարունակվում են մինչև 1930-ական թվականների սկզբները, 5. հարկ էր օգտագործել ՀՀ ԱԱԾ-ի արխիվի նյութերը:

Կարծում ենք, Հ. Հատիկյանի հետագա ուսումնասիրությունների համար օգտակար կլինեն հետևյալ աշխատությունները. М. К. Басханов. Армянский вопрос в Турции в материалах генштаба Российской империи. Анкара, 2013, 637 с.; А. А. Колесников, М. К. Басханов. Накануне Первой мировой: русская военная разведка на турецком направлении. Документы. Комментарии. Тула, 2014, 337 с.; Н. К. Тер-Оганов. Из истории разведки ШКВО в Турции и Иране (1870– 1918 гг.). Тель-Авив, 2015, 308 с.

Ռուբեն Սահակյան